ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ • НАШИ ЮБИЛЯРЫ

ԲԱԲԿԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ

(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

Լրացավ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, ՀԳԱ ակադեմիկոս Բաբկեն Առաքելյանի ծննդյան 80-ամյակը:

Բաբկեն Նիկոլայի Առաքելյանը ծնվել է 1912 թ. փետրվարի 1-ին, Հոկտեմբերյանի շրջանի Գեչրլու (Մրգաշատ) գյուղում: 1938 թ. ավարտելով Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, ընդունվում է ԽՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի պատմության ինստիտուտի ասպիրանտուրան և գիտական աշխատանքի պատրաստվում սկսդ. Հ. Օրբելու ղեկավարությամբ: 1941 թ. պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա «Հայկական բարձրաֆանդակները IV—VII դարերում» թեմայով:

Հայրենական մեծ պատերազմի օրերին Բ. Առաքելյանը գանվել է սովետական բանակում ու մասնակցել Հյուսիսային Կովկասի, Բելոռուսիայի, Լեհաստանի ազատագրմանը և Բեռլինի գրավմանը, աշխատելով բանակի և նակատի քաղաքաժիններում:

1946 թ. նա վերադառնում է գիտահետազոտական աշխատանքի ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում որպես ավագ գիտական աշխատակից: Դեռևս նախապատերազմյան տարիներին սկզբնավորվող նրա գիտական գործունեության բնորոշ առանձնահատկություններից մեկը բազմակողմանիությունն է, նեղ բնագավառներով չսահմանափակվելը: Այդ է պատճառը, որ նա հանդես է գալիս որպես և՛ պատմաբան, և՛ հնագետ, որին միևնույն չափով ծանոթ են ինչպես գրավոր, այնպես էլ իրական աղբյուրները, դրանով է նաև պայմանավորված նրա հետաքրքրությունը և՛ միջնադարյան, և՛ հին (անտիկ) շրջաններով: Նման մոտեցումը ի հայտ է եկել գիտության ասպարեզում առաջին քայլերը անելիս արդեն: Հայաստանի վաղ միջնադարյան պատմության ամենատարբեր հարցերի հետ մեկտեղ Բ. Առաքելյանին զբաղեցնում են նույն ժամանակաշրջանի արվեստն ու մշակույթը: Նրան հատկապես հետաքրքրում է Հայաստանի պատմության արաբական տիրապետության սկզբնական ժամանակաշրջանը (VII դարի երկրորդ կես): Նա իր ուժերը փորձել է նաև հայ առասպելաբանության և դիցաբանության բնագավառում: Առանձին գրքով լույս տեսած իր թեկնածուական դիսերտացիայում գիտնականն ընդհանրացնում էր հայ մշակույթի մի բնագավառ, որի նշանակությունը շատ մեծ է վաղ միջնադարյան գիտական հայացքների, գաղափարախոսության, կենցաղի ճանաչման համար:

Այդ տարիներին արդեն Բ. Առաքելյանը հաջողությամբ զուգորդում էր գիտահետազոտական աշխատանքը գիտակազմակերպչական գործունեության հետ: 1947—1949 թթ. վարում է ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական քարտուղարի պաշտոնը: 1949 թ. ստանձնում է պատմության ինստիտուտի հնագիտության և վիմագրության բաժնի վարիչի պարտականությունները և սկսում է Գառնիի պեղումները: Հին Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի նյութական մշակույթի ուսումնասիրման առաջին վարձ արվել էր 1931 թ. Վաղարշապատի պեղումների ընթացքում, սակայն հայ հնագիտությունը շարունակում էր կողմնորոշվել դեպի նախնադարյան (Շենգավիթ), ուրարտական (Կարմիր բլուր) և միջնադարյան (Դվին) ժամանակաշրջանները, աչքաթող անելով հայ մշակույթի զարգացման համարյա մեկ հազարամյակ: Այդ բացը լրացնելու առաջին քայլերը եղան Գառնիի պեղումները՝ Բ. Առաքելյանի ղեկավարությամբ: Արդեն հայտնի հնթանոսական տաճարի ավերակների և հունարեն նորագյուտ արձանագրության կողքին բացվեց ամբողջ պարիսպը՝ հին Հայաստանի նարտարապետության փառավոր կոթող: Իրար հաջորդեցին պալատական շենքը, բաղնիքը խճանկարով, դամբարանադաշտը՝ Հայաստանի մ. թ. ա. առաջին դարերի մշակույթի մակարդակը բնութագրող անփոխարինելի վկաները:

Իր ուսումնասիրողին էր սպասում նաև բուն հելլենիստական դարաշրջանի՝ մ. թ. ա. III—I դդ. մշակույթը: Այդ նպատակով Գառնիին զուգընթաց Բ. Առաքելյանը 1962 թ. սկսեց Արմավիրի պեղումները: Հաղթահարելով հուշարձանի բազմաշերտության հետ կապված դժվարությունները, արշավախումբը ուրարտական և միջնադարյան մնացորդների կողքին հաստատեց միջանկյալ հին հայկական շերտի գոյությունը:

Տրայանոս կայսեր լատինական մեծ արձանագրության հայտնաբերումը հին Արաշատի քաղաքային տարածքի ծայրամասում արագացրեց հին Հայաստանի ամենահնչակավոր մայրաքաղաքի ուսումնասիրման անհրաժեշտությունը: 1970 թ. Բ. Առաքելյանի ղեկավարությամբ պեղումներ սկսվեցին Խոր Վիրապի բլուրներում: Պաշտպանողական կառույցների, ինչպես նաև շենքերի համալիրները, մարմարե կանացի արձանիկը, ոսկե զարդերը, հայկական դրամների գանձը և այլ գյուտեր վկայում են պեղավայրի հիշտ ընտրության մասին, նրա բացառիկ նշանակության մասին Հայաստանի հելլենիստական և հռոմեական ժամանակաշրջանի պատմության, նյութական մշակույթի ու արվեստի ուսումնասիրման համար:

1954 թ. Բ. Առաքելյանը պաշտպանում է դոկտորական դիսերտացիա՝ «Քաղաքները Հայաստանում X—XII դարերում» թեմայով, որն ապա լույս տեսավ երկու ստվարածավալ հատորներով: Անիի ու Դվինի պեղումները նպաստավոր նախադրյալներ էին ստեղծել նման աշխատության համար, որը հիմնվում էր նաև հայ և օտար պատմիչների հաղորդումների, ձեռագրերի ու վիմական արձանագրությունների տվյալների, ազգագրական նյութերի վրա: Իր այդ աշխատության մեջ հեղինակը վեր հանեց զարգացած ֆեոդալիզմի շրջանի հայկական քաղաքների ներքին կյանքը, սոցիալական հարաբերությունները, արհեստավորական միությունների (համքարությունների), քաղաքային ինքնավարության, արհեստագործության ու առևտրի զարգացման հետ կապված բազմաթիվ հարցեր, որոնք դուրս էին մնացել նախորդ ուսումնասիրողների տեսադաշտից կամ բավարար չափով չէին լուսաբանվել: Իր այս մենագրությամբ Բ. Առաքելյանը մեծապես նպաստեց Հայաստանի տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը գիտականորեն որոշելու գործին:

1976 թ. Բ. Առաքելյանը լույս է ընծայում «Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության (մ. թ. ա. VI—մ. թ. III դդ.)» պատկերազարդ գիրքը, որը հեղինակի տվյալ բնագավառում կատարած բազմամյա աշխատանքների յուրահատուկ ամփոփումն է: Գրքում քննարկվում են մոնումենտալ և կիրառական արվեստի հուշարձանները, ծավալային և ռելիեֆ քանդակները, խեցեղեն, մետաղից, քարից, կավից, ապակուց պատրաստված գեղարվեստական ստեղծագործությունները, հայ թագավորների հատած դրամների, ինչպես և գեմմաների ու կնիքների պատկերագրությունը: Լուսաբանվում են հին հայկական արվեստի ձևավորումը և նրա զարգացման փուլերը և օրինաչափությունները վաղ հայկական (մ. թ. ա. VI—IV դդ.), հելլենիստական (մ. թ. ա. III—I դդ.) դարաշրջաններում ինչպես և մ. թ. I—III դարերում: Իր այս աշխատության համար հեղինակը 1979 թ. արժանացավ ՀԵՍՀ ԴԱ պետական մրցանակի:

Բ. Առաքելյանի տնօրենության տարիներին (1959—1986) ԴԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը դառնում է հանրապետության հանաչված գիտական օջախներից մեկը, որտեղ կարևոր աշխատանքներ են տարվում Հայաստանի հնագիտության, ազգագրության, բանահյուսության, մարդաբանության ուսումնասիրման ուղղությամբ: Այդ մասին են վկայում ինստիտուտի՝ հանրապետությունում և նրա սահմաններից դուրս բեղմնավոր աշխատանք ծավալող բազմաթիվ արշավախմբերը, ինչպես նաև ինստիտուտի ուժերով իրագործվող հնագիտական («Հնագիտական պեղումները Հայաստանում» 22 պրակ. «Հայաստանի հնագիտական հուշարձանները» 14 պրակ), վիմագրական («Դիվան հայ վիմագրության» 6 հատոր), ազգագրական ու բանահյուսական («Հայ ազգագրություն և բանահյուսություն» 18 հատոր, «Հայ ժողովրդի հեքիաթներ» 13 հատոր) արդեն լայն հանաչում ստացած մատենաշարերը: Այդ տարիներին ինստիտուտի գիտական գործունեության կարևորագույն կողմերից մեկը պետք է համարել նաև Արցախի պատմությանը և մշակույթին նվիրված բազմաթիվ աշխատությունների հրատարակումը:

Ուշագրավ է նաև Բ. Առաքելյանի կատարած գիտամանկավարժական աշխատանքը Երևանի պետական համալսարանում և այլուր: Հին Հայաստանի մշակույթին նվիրված նրա դասընթացները մեր ուսանողությանը ծանոթացնում են Հայաստանի հնագիտության հիշ ուսումնասիրված ժամանակաշրջանի ամբողջական պատկերին:

1969-ին Առաքելյանին շնորհվել է գիտության վաստակավոր գործչի կոչում. 1974 թ. ընտրվել է ԴԱ ակադեմիկոս: 1983—1990 թթ. Բ. Առաքելյանը ղեկավարում էր ՀԴԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքը որպես ակադեմիկոս-քարտուղար: Անվանի գիտնականը այսօր էլ շարունակում է իր հնագիտական ուսումնասիրությունները: Ցանկանանք նրան երկար տարիների կյանք:

Պատ. գիտ. դոկտոր Գ. Ա. ՏԻՐԱՑՅԱՆ